# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի   Մ Ա Ր Զ Պ Ե Տ

## ՈՐՈՇՈՒՄ

<<27>> մարտի 2026թ.                                                   N ՄՈ/175-Ա

ք. Արմավիր

**«ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ N3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԼԻԼԻԱ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ, ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի, 16-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» ենթակետի և 5-րդ մասի պահանջները, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2026 թվականի մարտի 20-ի N01/17/02084-2026 գրությունը և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության պետի 2026 թվականի մարտի 27-ի N25.8.1/15443-2026 գրությունը, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու պատճառով.

**որոշում եմ՝**

1. 2026 թվականի մարտի 27-ից դադարեցնել «Վաղարշապատի Հ. Հովհաննիսյանի անվան N3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Լիլիա Միրզախանյանի լիազորությունները՝ ազատելով նրան «Վաղարշապատի Հ. Հովհաննիսյանի անվան N3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի պաշտոնից և լուծելով նրա հետ 2024 թվականի նոյեմբերի 5-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**ՄԱՐԶՊԵՏ՝**        Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179        **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**